



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2011թ. շնչհունվարի 23-ի թիվ 33/3

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՍԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԻ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ
ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից
սակագների սահմանման արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության
արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ՋԱԲԱՐՅԱՆ



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊԻ խորհրդի

2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/3 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀԱՅՐՉ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի կողմից սակագների սահմանման արդյունավետության
նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության իրականացման հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի
գործունեության տարեկան ծրագրի 6-րդ կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի
2011 թվականի հունիսի 17-ի թիվ 19/1 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից սակագների սահմանման
արդյունավետության նկատմամբ վերահսկողության իրականացում:

Վերահսկողության առարկան՝ Հանձնաժողովի կողմից հաստատված սակագների
սահմանման (վերանայման) մեթոդիկաների և ընթացակարգերի
արդյունավետությունը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով:

Վերահսկողության իրականացման ժամկետը՝ 08.08.2011-18.11.2011 թթ.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը՝ 01.01.2008- 01.07.2011թթ.:

Վերահսկողության ձևը՝ դիտարկում և վերլուծություն;

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Դիտարկման ընթացքում կիրառվել են
տարբեր մոտեցումների և սկզբունքների համադրման/համեմատման մեթոդները,

կատարվել է մի շարք տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն:
Արդյունքում ամփոփվել են դիտարկման ընթացքում արձանագրված փաստերը:

Հանձնաժողովի կողմից սակագների սահմանում և վերանայում

Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտն իր մեջ ներառում է՝

ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,

բ) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը,

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը,

դ) փոստային կապի բնագավառը,

ե) երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով,

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ միայն սակագների մասով:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով, ջրային օրենսգրքով, «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին» օրենքներով և այլ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների հիման վրա և ինքնուրույն է իր իրավասությունների շրջանակում:

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության

ապահովմանը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով ամրագրված սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

1. Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառի սակագնային քաղաքականությունը պետք է իրականացվի «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներով ամրագրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան: Մասնավորապես, սակագների ձևավորման սկզբունքներն են՝

- լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը,

- ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը,

- հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը,

- սպառման ծավալով, պատվիրված հզորությամբ, տարվա եղանակով, օրվա ժամերով, միացման պայմաններով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակումը,

- հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,

- բնապահպանական նորմերն ապահովելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված ծախսերի ներառումը,

- ՀՀ կառավարության կողմից հաստատված էներգետիկայի զարգացման ծրագրով նախատեսված էներգատեղակայանքների կոնսերվացման և պահպանման ծախսերի ներառումը,

- օգտագործված միջուկային վառելիքի պահպանման անհրաժեշտ ծախսերի և ատոմակայանը շահագործումից հանելու հիմնադրամին անհրաժեշտ հատկացումների ապահովումը,

- հիմնավորված տեխնիկական և առևտրային կորուստների ներառումը,

- օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Հանձնաժողովը սահմանում է էներգետիկայի բնագավառում արտադրության, հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման կարգավորվող սակագները, ինչպես նաև էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման առավելագույն սակագները:

Սակագների սահմանման և վերանայման գործընթացը կանոնակարգելու նպատակով Հանձնաժողովը 1998թ. օգոստոսի 31-ի №40 որոշմամբ հաստատել է էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը, որը անցած տարիների ընթացքում պարբերաբար փոփոխվել է և ներկայումս գործում է 2007թ. հունիսի 15-ի №272Ն որոշմամբ հաստատված տարբերակը, որի 3.7 կետով սակագնի սահմանման և վերանայման համար նախատեսված է համապատասխանաբար՝ 60 և 90 օրյա ժամկետները:

Հանձնաժողովը 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը, ներառյալ էներգետիկայի բնագավառի մասով, կայացրել է սակագների սահմանման (սահմանում և վերանայում) 266 որոշում, որից էլեկտրաէներգետիկական համակարգում՝ 257, գազամատակարարման համակարգում՝ 4 և ջերմամատակարարման համակարգում՝ 5 (Հավելված 1):

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեությունը վերահսկելու նպատակով մշակվել է տեխնիկատնտեսական և ֆինանսական հաշվետվությունների ձևեր, որոնց համաձայն ներկայացված տեղեկատվությունը վերլուծվում է Հանձնաժողովի կողմից: Այդ տվյալները հաշվի են առնվում սակագների վերանայման ժամանակ:

Հանձնաժողովը 2002թ. հոկտեմբերի 2-ի №64Ն որոշմամբ հաստատել է էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը, որը փոփոխվել է և ներկայումս գործում է 2010թ. հուլիսի 14-ի №365Ն որոշմամբ հաստատված տարբերակը: Նշված կարգով սահմանվում են ներդրումների ուղղությունները, ներդրումային ծրագրերի կառուցվածքը և Հանձնաժողովի հետ համաձայնեցման ընթացակարգերը:

Լիցենզավորված անձանց և սպառողների շահերը հավասարակշռելու, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 27.12.2006թ. №358Ն որոշմամբ հաստատել է Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, 08.07.2005թ. №95Ն որոշմամբ՝ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները և 29.05.2001թ. №23Ն որոշմամբ՝ ջերմային Էներգիայի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնները:

1.1 Էլեկտրաէներգետիկական համակարգ

Էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագնային քաղաքականությունն իրականացնելիս Հանձնաժողովը կիրառում է հետևյալ մոտեցումները.

Առաջին, հիմնական մոտեցման համաձայն, ծառայությունների մատուցումից ստացված հասույթը պետք է բավարարի ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացմանը, օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության հատուցմանը, ինչպես նաև օգտակար և օգտագործվող ակտիվների դիմաց ողջամիտ շահույթի ապահովմանը: Նշված սկզբունքը ամրագրված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև Հանձնաժողովի 2002թ. նոյեմբերի 1-ի №79Ս որոշմամբ հաստատված «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Էլեկտրական Էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանների սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանությամբ, 2003թ. սեպտեմբերի 30-ի №62Լ, 2005թ. սեպտեմբերի 16-ի №125Ն, 2005թ. նոյեմբերի 4-ի №158Ս, 2007թ. հունիսի 15-ի №275Ն որոշումներով հաստատված մեթոդիկաներում և կիրառվում է հետևյալ լիցենզավորված անձանց նկատմամբ.

- «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ,
- «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ներ,

- էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող խոշոր հիդրոէլեկտրակայաններ (կասկադներ), ջերմային կայաններ և ատոմային կայաններ,
- էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող անձ,
- փոքր հիդրոէլեկտրակայաններ (մինչև 10ՄՎտ տեղակայված հզորություն), բացառությամբ Հանձնաժողովի 2007թ. մայիսի 4-ի №207-Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայով նախատեսված հիդրոէլեկտրակայանների:

Երկրորդ մոտեցումը, դա վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայանների համար նախագծային տվյալների հիման վրա նախապես հաշվարկված և հանձնաժողովի որոշմամբ հաստատված բազիսային սակագնային մեծությունների կիրառումն է, որոնք ճշգրտվում են յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները: Նշված մոտեցումը կիրառվում է սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործումը խթանելու և այդ գործունեության մեջ ներդրումները խրախուսելու նպատակով: Գործընթացը կանոնակարգելու համար Հանձնաժողովը 2007 թվականի մայիսի 4-ի №207Ն որոշմամբ հաստատել է ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան, որը տարածվում է բնական ջրահոսքերի, ոռոգման համակարգերի և խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների, հողմային էլեկտրակայանների և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանների վրա:

Լիցենզավորված անձանց և սպառողների շահերը հավասարակշռելու, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 27.12.2006թ. N358Ն որոշմամբ հաստատել է էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները: Էլեկտրաէներգիայի գիշերային զեղչ սակագներից օգտվելու համար բաժանորդների մոտ պետք է տեղակայված

լինեն բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներ: Վերահսկողությամբ արձանագրվել է, որ միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչ տեղադրելու համար սպառողը պետք է իրականացնի կանխավճար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին 20 հազար դրամի չափով: Այդ որոշումն ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 27-ին և անհրաժեշտ է վերանայել այդ մեծությունը՝ սպառողների համար սահմանելով ավելի մատչելի կանխավճարի չափ:

Հանձնաժողովի 27.12.2006թ. N358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով կանոնակարգվում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու պայմանները: Իսկ Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N659Ն որոշմամբ հաստատվել են նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները:

Նոր սպառողների՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացը կարգավորելու նպատակով Հանձնաժողովի 2011թ. հունիսի 7-ի N307Ն և N308Ն որոշումներով կրճատվել են 0.4 (0.22) կՎ լարման սպառողների համար նախատեսված ցանցին միացման ժամկետները, ինչպես նաև 0.4 (0.22) կՎ լարման միացող առանձնատների կամ առևտրային սպառողների միացման վճարները:

Հաշվի առնելով, որ փոքր ու միջին բիզնեսը ներկայացնող սպառողներ կան նաև 6 (10) կՎ լարման սպառողական խմբում, ուստի անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել 6 (10) կՎ լարման սպառողների սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների և վճարների կրճատման ուղղությամբ:

Հանձնաժողովը 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ էլեկտրաէներգետիկական համակարգի մասով կայացրել է սակագների սահմանման (սահմանում և վերանայում) 257 որոշում, որից էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայաններ՝ 27, փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 201, կոգեներացիոն կայաններ՝ 9, այլ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող կայաններ՝ 7, էլեկտրաէներգետիկական համակարգին

ծառայություններ մատուցողներ՝ 12 և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ՝ 1 (Հավելված 1):

1.2 Գազամատակարարման համակարգ

Գազամատակարարման համակարգի գործունեությունն իրականացնում են երկու ընկերություններ՝ «ՀայԲուսգազարդ» ՓԲԸ-ն և «Տրանսգազ» ՍՊԸ-ն: Առաջինը իրականացնում է բնական գազի ներկրումը, բաշխումը և մատակարարումը, ինչպես նաև համակարգի կառավարումը, իսկ երկրորդը՝ գազի փոխադրումը հանրապետության սահմանից մինչև բաշխող ընկերություն և ստորգետնյա պահեստարանների շահագործումը: Գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկը Հանձնաժողովն իրականացնում է իր 2004թ. դեկտեմբերի 21-ի №168Ա որոշմամբ հաստատված մեթոդիկայի համաձայն, որում նույնպես ամրագրված է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը:

Նշված մեթոդիկան նախատեսում է սակագների մշակման գործընթացի իրականացման հետևյալ փուլերը.

- առաջին փուլում հաշվարկվում են համակարգի ընկերությունների տարեկան հասույթների մեծությունները, որոնք բավարար կլինեն նրանց հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերի կատարման և ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթ ստանալու համար,
- երկրորդ փուլում սպառողների և սպառողական խմբերի համար որոշվում է ծառայությունների մատուցման արժեքը՝ տարբեր գործառույթների ծախսերի դասակարգման և անհրաժեշտ հասույթի տարբեր սպառողական խմբերի միջև բաշխման միջոցով,
- երրորդ փուլում ընտրվում են սակագների կառուցվածքները և հաշվարկվում են սակագնային դրույթները:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ ներկայումս բնական գազի սակագները տարբերակվում են ըստ սպառման ծավալների՝ ամսական մինչև 10,0 հազար խորանարդ մետր սպառողներ և ամսական 10,0 հազար խորանարդ մետր ու ավելի սպառողներ, որի հիմքում ընդունվել է այն սկզբունքը, որ խոշոր

սպառողները հիմնականում բարձր և միջին ճնշման գազատարներից օգտվող բաժանորդներ են, իսկ փոքր սպառողները՝ (այդ թվում՝ բնակիչները) ցածր ճնշման գազատարներից օգտվողները:

Միաժամանակ, արձանագրվել է, որ գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկան նախատեսում է սակագների տարբերակում ըստ պահանջվող հզորության, սպառման ծավալների, ժամանակի, միացման պայմանների: Մեթոդիկան նախատեսում է, որ սպառողների խմբերը կարող են դասակարգվել նաև ըստ տնտեսության ոլորտների՝

- բնակչություն (կենցաղային սպառողներ),
- ընդհանուր առևտրային սպառողներ,
- սեղմված բնական գազի մատակարարներ,
- ջերմային էլեկտրակայաններ,
- ջերմամատակարարում իրականացնողներ,
- խոշոր արդյունաբերական սպառողներ:

Լիցենզավորված անձանց և սպառողների շահերը հավասարակշռելու, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2005 թվականի հուլիսի 8-ի N95Ն որոշմամբ հաստատել է բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները: Վերահսկողությամբ արձանագրվել է, որ ի տարբերություն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների՝ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում նախատեսված չեն մատակարարի նկատմամբ կիրառվող տույժեր, որոնք մատակարարը պարտավոր է վճարել սպառողին՝ կանոններով նախատեսված պահանջները չկատարելու կամ խախտելու համար:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների համաձայն՝ բնակչության ներտնային գազամատակարարման համակարգը պետք է ենթարկվի պարբերական տեխնիկական սպասարկման: Հանձնաժողովը 2005թ. նոյեմբերի 1-ի N154Ն որոշմամբ սահմանել է բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարները՝ մեկ, երկու, երեք և ավելի գազօգտագործող սարքավորումների համար:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ վերը նշված վճարները չեն վերանայվել սահմանման պահից ի վեր, մինչդեռ անցել է շուրջ 6 տարի: Այդ տարիների ընթացքում գրեթե կրկնապատկվել է բնական գազի սպառողների թվաքանակը, տեղի է ունեցել սպառողական ապրանքների գների աճ և փոխվել են բազմաթիվ այլ գործոններ, որոնք կարող են նվազեցնել բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարները:

Հանձնաժողովը 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ, գազամատակարարման համակարգի մասով կայացրել է սակագների վերանայման 4 որոշում, որից «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի մասով՝ 2 և «Տրանսգազ» ՍՊԸ-ի մասով՝ 2 (Հավելված 1):

1.3 Ջերմամատակարարման համակարգ

Ջերմամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման գործընթացը կանոնակարգվում է Հանձնաժողովի 2007թ. հունիսի 15-ի №273Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համաձայն, որը սահմանում է ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման, բաշխման գործունեության լիցենզիաներ միաժամանակ ունեցող իրավաբանական անձի կողմից ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի մատակարարման սակագնի հաշվարկման սկզբունքները այն կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի համար, որոնց ջերմադրյուր է հանդիսանում կենտրոնական կաթսայատունը կամ ջերմաէլեկտրակենտրոնը: Ջերմային էներգիայի մատակարարման սակագնի հաշվարկի հիմքում նույնպես դրվում է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը:

Ընդ որում, համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի, ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները չեն կարգավորվում (չեն լիցենզավորվում և սակագներ չեն սահմանվում), եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8 ՄՎտ:

Հանձնաժողովը ներկայումս սահմանում է միայն «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կայանից արդյունաբերական նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը: 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ կայացվել է սակագների սահմանման և վերանայման 5 որոշում (Հավելված 1):

2. Ջրային համակարգ

Ջրային համակարգը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը, որոնց սակագնային քաղաքականությունը Հանձնաժողովն իրականացնում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ ջրային օրենսգրքում համապատասխան փոփոխությունների կատարումից (ուժի մեջ են մտել 2003թ. մայիսի 10-ին) հետո:

Տվյալ բնագավառում Հանձնաժողովը մշակում և իրականացնում է սակագնային քաղաքականությունը և ոչ մրցակցային ջրամատակարարներին տալիս է ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ: Սակագնային քաղաքականությունն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ ջրային օրենսգրքի 79-րդ հոդվածով ամրագրված կարգավորվող սակագների ձևավորման հետևյալ սկզբունքներով՝

- ծառայության արժեքի սահմանումը (ներառյալ՝ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված օգտագործման և պահպանման ծախսերը), հիմնական միջոցների մաշվածության փոխհատուցման ապահովումը,

- ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը,
- վարկերի սպասարկման ծախսերի ներառումը,
- պահանջվող ծառայության նվազագույն չափանիշների սահմանումը,
- սակագնային կարգավորման միջոցով մատուցվող ծառայությունների որակի ապահովման և սպառողների վճարունակության հաշվի առնելը,
- սպառման ծավալով, տարվա եղանակով, օրվա ժամերով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակումը,
- հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,

- ջրի ազգային ծրագրի պահանջների պահպանումը,
- հիմնավորված տեխնոլոգիական կորուստների ներառումը,
- օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի

ներառումը,

- արդյունավետ ջրօգտագործման և ջրերի ստանդարտների պահպանման խթանների ստեղծումը,

- մատուցվող ծառայության որակի բարձրացման խթանների ստեղծումը:

Սակագների սահմանման և վերանայման գործընթացը կանոնակարգելու նպատակով Հանձնաժողովը 2004թ. օգոստոսի 9-ի №97Ն որոշմամբ հաստատել է ջրային համակարգում սակագների սահմանման ու վերանայման կարգ: 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ ջրային համակարգի մասով Հանձնաժողովը կայացրել է սակագների սահմանման (սահմանում և վերանայում) 10 որոշում, որից խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման մասով՝ 9, իսկ ոռոգման ջրի մատակարարման մասով՝ 1 (Հավելված 1):

Ջրային համակարգի թուլտվություն ունեցող անձանց համար նույնպես Հանձնաժողովը մշակել է տեխնիկատնտեսական և ֆինանսական հաշվետվությունների ձևեր, որոնց համաձայն ներկայացված տեղեկատվությունը վերլուծվում է Հանձնաժողովի կողմից, և որոնց արդյունքները հաշվի են առնվում սակագների վերանայման ժամանակ:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ Հանձնաժողովը ջրային համակարգում չի հաստատել ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգ, քանի որ կարգավորվող գործունեություն իրականացնող ընկերությունների ջրային համակարգերը և այլ գույքը պետական սեփականություն են և այդ ակտիվների ավելացմանը կամ փոխադրմանն ուղղված ներդրումները հիմնականում կատարվում են պետության երաշխավորությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկային և դրամաշնորհային ծրագրերով և սակագներում հաշվի են առնվում վարկային համաձայնագրերի պայմաններին համապատասխան:

2.1 Խմելու ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում

Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ են մատուցում ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող 5 ընկերություններ և 1՝ անհատ ձեռնարկատեր, որոնց սակագնային քաղաքականությունը իրականացնելիս Հանձնաժողովը կիրառում է 2 մոտեցում՝ կախված ջրային համակարգի կառավարման ձևից (հավատարմագրային կառավարում, վարձակալություն):

Մոտեցում առաջին. Հանձնաժողովի 2005թ. ապրիլի 5-ի №33Ն որոշմամբ հաստատված Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանությամբ ամրագրված՝ համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքն է, համաձայն որի անհրաժեշտ հասույթը բավարարում է ընկերությունների հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերի իրականացմանը և ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթի ապահովման: Ընդ որում, նշված մեթոդաբանությունը, ընկերության ակտիվների ֆինանսավորման աղբյուրներից, պայմաններից և հնարավորություններից ելնելով, նախատեսում է թույլատրելի շահույթի որոշման 2 եղանակ՝ գուտ ակտիվների շահույթի նորմայի եղանակ և անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հատուցման եղանակ: Հանձնաժողովի կողմից կիրառվում է ֆինանսական ծախսերի հատուցման եղանակը, համաձայն որի թույլատրելի շահույթը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ընկերության փաստացի ֆինանսական պարտավորությունները և ընթացիկ ծախսերի կազմում չընդգրկված ջրային համակարգի պահպանման և համալրման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը: Հաշվի առնելով, որ այդպիսի ծախսերի ֆինանսավորման աղբյուր են նաև մաշվածության գումարները, անհրաժեշտ հասույթի հաշվարկում մաշվածության և շահույթի փոխարեն ընդգրկվում են փոխառու միջոցների սպասարկման (տոկոսավճարներ) և մարման ծախսերը, փոխառու միջոցներով և շահագործման ծախսերով չֆինանսավորվող

հիմնական միջոցների համալրման համար տվյալ տարվա հասույթից կատարվող տարեկան կապիտալ ծախսերը:

Վերոհիշյալ մեթոդաբանության համաձայն՝ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագներ է սահմանվում «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների և Ա/Ձ Ալբերտ Պետրոսյանի համար:

Մոտեցում երկրորդ. ՀՀ կառավարության կողմից կազմակերպված Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ջրային համակարգերը վարձակալությամբ փոխանցելու մրցույթի արդյունքում վարձակալության 10 տարիների համար առաջարկված և սահմանված բազիսային սակագների կիրառման և որոշակի գործոններով ճշգրտման մոտեցումն է: Վարձակալության մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆրանսիական «Ժեներալ դեզ Օ» կազմակերպությունը հիմնադրել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ն, որն իր գործունեությունն սկսել է 2006 թվականից: Սակագների հաշվարկման սկզբունքները և վարձակալության 10 տարիների բազիսային սակագները ամրագրված են Հանձնաժողովի 2006թ. մայիսի 30-ի №88Ա որոշմամբ հաստատված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմաններում, համաձայն որի մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 28-ը ընկերության ներկայացրած հայտի հիման վրա Հանձնաժողովը 90 օրյա ժամկետում սահմանում է վարձակալության հաջորդ տարվա խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագները: Բազիսային սակագների ճշգրտումն իրականացվում է՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

ա) մանրածախ ջրամատակարարման ծավալը, որն անհրաժեշտության դեպքում մոնիթորինգի է ենթարկվում Հանձնաժողովի կողմից,

բ) տարեկան սղաճը,

գ) Եվրո/ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխությունը,

դ) ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությունը:

2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մասով Հանձնաժողովը կայացրել է սակագների սահմանման և վերանայման 9 որոշում (Հավելված 1):

2.2 Ռոռգման ջրի մատակարարում

ՀՀ ջրային օրենսգրքի 79 և 79.1 հոդվածներին համապատասխան Հանձնաժողովը կարգավորում է միայն ռոռգման մեծածախ ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագները: Ընդ որում, ռոռգման մեծածախ ջուր մատակարարող անձանց կողմից ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկներն իրականացվում են Հանձնաժողովի 2005թ. հունիսի 24-ի №79Ն որոշմամբ հաստատված մեթոդաբանության համաձայն: Հանձնաժողովը ռոռգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներն իրականացնելիս նույնպես կիրառում է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, իսկ թույլատրելի շահույթի որոշման համար՝ անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հատուցման եղանակը:

Հանձնաժողովը ռոռգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագներ է սահմանում «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Սևան-Հրազդանյան ջրառ», «Դեբեդ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների և Ա/Ձ Ալբերտ Պետրոսյանի համար: 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ Հանձնաժողովը կայացրել է սակագների սահմանման 1 որոշում (Հավելված 1):

3. Հեռահաղորդակցության (Էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում Հանձնաժողովը կարգավորման գործառույթներն իրականացնում է 2006 թվականից՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենսդրությամբ սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան: Այդ օրենքի 27-րդ հոդվածով սակագների կարգավորման համար Հանձնաժողովն ունի հետևյալ իրավասությունները.

- ծառայությունների մատուցման մեջ գերիշխողների կողմից մատուցվող կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների սահմանում,

- ծառայությունների մատուցման մեջ ոչ գերիշխողների կողմից մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների կարգավորում, եթե այն անհրաժեշտ է մրցակցությունը և հանրային շահերը պաշտպանելու համար (բացառությամբ ինտերնետային ծառայություններ մատուցողի կողմից ինտերնետ հասանելիության դիմաց գանձվող սակագների),

- ծառայությունների մատուցման մեջ ոչ գերիշխողների կողմից հանրությանը մատուցվող համընդհանուր ծառայությունների սակագների կարգավորում:

Հաշվի առնելով, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, գերիշխող օպերատոր է հանդիսանում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն և նա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցում ծառայություններ մատուցող միակ օպերատորն էր (այլ օպերատորները նոր էին սկսել իրենց գործունեությունը և դեռևս ձևավորված չէր մրցակցային շուկա), Հանձնաժողովը 2007թ. օգոստոսի 24-ի №340Ն և 2007թ. նոյեմբերի 16-ի №530Ն որոշումներով սահմանել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների առավելագույն սակագները: Միաժամանակ, Հանձնաժողովը 2007թ. նոյեմբերի 16-ի №529Ս որոշմամբ հաստատել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների առավելագույն սակագներից ցածր սակագների կիրառման կարգը, որը կանոնակարգում է առավելագույն սակագներից ցածր սակագների կիրառման ժամանակ ընկերության գործողությունները: Հարկ է նշել, որ անցած 4 տարիների ընթացքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցում ծառայությունները մատուցել է սահմանված առավելագույն սակագներով:

2008թ. մայիսի 20-ի №273Ա որոշմամբ հաստատվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը:

Այնուհետև, ոչ աշխարհագրական սկզբունքով (հանրապետության բոլոր բնակավայրերում միևնույն կողի կիրառմամբ) համարներ օգտագործող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի օպերատորների նկատմամբ անբարեխիղճ մրցակցությունը բացառելու նպատակով 2010թ. հունիսի 30-ի №326Ա և №327Ն որոշումներով լրացվել է սակագնային կարգավորման ծառայությունների ցանկը և սահմանվել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ամրակցված կապի ցանցից դեպի ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորի ամրակցված կապի ցանց կատարվող զանգերի առավելագույն սակագները, իսկ 2011թ. սեպտեմբերի 7-ի №415Ա որոշմամբ «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ», «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-երին հանձնարարվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցից դեպի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցեր կատարվող զանգերի համար կիրառել միևնույն սակագինը՝ ըստ յուրաքանչյուր սակագնային փաթեթի:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ Հանձնաժողովի 2007թ. օգոստոսի 24-ի №340Ն և 2007թ. նոյեմբերի 16-ի №530Ն որոշումներով հաստատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, այնուհետև 2008թ. մայիսի 20-ի №273Ա որոշմամբ՝ սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկը: Արդյունքում, Հանձնաժողովի որոշումներով սահմանված են սակագներ, այնպիսի ծառայությունների համար, որոնք նախատեսված չեն սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկով: Անհրաժեշտ է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի սակագների հաջորդ վերանայման ժամանակ սակագները սահմանել սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկին համապատասխան:

Հանձնաժողովը սակագնային կարգավորում է իրականացնում նաև հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխկապակցման ծառայությունների մեծածախ շուկայում: Մասնավորապես, իր 2009թ. օգոստոսի 19-ի №506Ա, 2009թ.

օգոստոսի 19-ի №507Ա, 2009թ. օգոստոսի 26-ի №528Ա, 2009թ. սեպտեմբերի 9-ի №566Ա, 2010թ. փետրվարի 24-ի №47Ն և 2010թ. հունիսի 30-ի №325Ն որոշումներով սահմանել է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ», «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների և ոչ աշխարհագրական սկզբունքով (հանրապետության բոլոր բնակավայրերում միևնույն կողի կիրառմամբ) համարներ օգտագործող ամրակցված կապի օպերատորների ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարները:

2009թ. հանձնաժողովն, իր նախաձեռնությամբ, իրականացրել է մի գործընթաց, որն ուղղված էր ՀՀ-ում ինտերնետ շուկայի զարգացմանը, ինչպես նաև մատուցվող ինտերնետ ծառայությունների մատչելիությանը և ողջամիտ սակագների կիրառմանը: Արդյունքում, հանձնաժողովը 2009թ. հոկտեմբերի 14-ի №641Ա որոշմամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ է ճանաչել «ԱրմենՏել» և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերություններին, իսկ 2009թ. նոյեմբերի 18-ի №728Ա որոշմամբ սահմանել է այդ ընկերությունների կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության առավելագույն սակագնի հաշվարկման բանաձևը: Նշված գործընթացի արդյունքում արդեն իսկ նվազել են վերջնական սպառողներին ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագները: Սակայն, ներկայումս կառուցվածքային փոփոխության է ենթարկվել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկան և միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների համար ընկերությունների կողմից առաջարկվում են Հանձնաժողովի սահմանած սակագներից զգալիորեն ցածր սակագներ: Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի Հանձնաժողովը վերանայի միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների վերաբերյալ իր վերը նշված որոշումները:

Ինչ վերաբերում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ծառայություններին, ապա այդ շուկայում առկա է մրցակցություն և Հանձնաժողովի կողմից շարժական բջջային կապի ծառայությունների սակագների սահմանման անհրաժեշտություն չկա:

Հանձնաժողովը 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի մասով կայացրել է

սակագների և վճարների սահմանման (սահմանում և վերանայում) 9 որոշում (Հավելված 1):

4. Փոստային կապի բնագավառ

Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների կարգավորման գործառույթը Հանձնաժողովին է վերապահվել 2007 թվականից՝ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան: Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ են հանդիսանում ՀՀ ամբողջ տարածքում փոստային կապի ծառայությունները՝ նամակագրական թղթակցության, մինչև 20 կիլոգրամ քաշով ծանրոցների և գյուղական բնակավայրերում պաշտոնական պարբերականների առաքման գծով, ինչպես նաև «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքով սահմանված փաստաթղթերի հատուկ առաքումը: «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 18.1 հոդվածի համաձայն՝ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների ձևավորման սկզբունքներն են.

- նշված ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը,
- ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը,
- հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը,
- ծառայությունների տեսակներով և առանձնահատկություններով պայմանավորված սակագների տարբերակումը,
- հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Հիմք ընդունելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 18.2-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը 2007թ. դեկտեմբերի 7-ի №629Ա և №630Ա որոշումներով հաստատել է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման

կարգը և փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման ու վերանայման կարգը:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների սահմանման (վերանայման) գործառույթը Հանձնաժողովին վերապահելուց ի վեր «Հայփոստ» ՓԲԸ-ն սակագների վերանայման հայտ չի ներկայացրել և Հանձնաժողովն իր որոշմամբ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագներ չի սահմանել: Արդյունքում, դեռևս գործում են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2001թ. դեկտեմբերի 28-ին հաստատված ՀՀ տարածքում փոստային կապի ծառայությունների սակագները:

Արձանագրվել է նաև, որ Հանձնաժողովն ազգային օպերատորի համար չի մշակել և սահմանել փոստային առաքման ծավալների վերաբերյալ հաշվետվությունների ձևեր և չի ստանում ընկերության կողմից առաքված՝ նամակագրական թղթակցության, փոստային ծանրոցների ու բեռնարկերի, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակությունների ծավալային և քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, ինչն անհրաժեշտ կլինի փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման և վերանայման համար: Անհրաժեշտ է փոստային կապի ազգային օպերատորի համար սահմանել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների ծավալների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևեր:

5. Երկաթուղային տրանսպորտի բնագավառ

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների կարգավորման գործառույթը Հանձնաժողովն իրականացնում է 2008 թվականից՝ «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան: Մասնավորապես, նշված օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների ձևավորման սկզբունքներն են՝

- լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական

միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը,

- ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը,
- հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը,
- ծառայությունների տեսակներով և առանձնահատկություններով պայմանավորված օգտագործման վճարների տարբերակումը,
- հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,
- բնապահպանական նորմերն ապահովելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված ծախսերի ներառումը,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Հիմք ընդունելով «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը 2008թ. դեկտեմբերի 24-ի №730Ա և №731Ա որոշումներով հաստատել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը և այդ ընկերության ենթակառուցվածքի օգտագործման վճարների սահմանման ու վերանայման կարգը:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների կարգավորման գործառույթը Հանձնաժողովին վերապահելուց ի վեր երկաթուղային տրանսպորտի գործունեության շուկա մուտք գործելու հայտ այլընտրանքային փոխադրողների կողմից չի ներկայացվել: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն շարունակում է մնալ միակ փոխադրողը և օգտագործման վճարների սահմանման հայտ չի ներկայացրել Հանձնաժողով, որի արդյունքում սահմանված չեն ենթակառուցվածքի օգտագործման վճարները:

Արձանագրվել է նաև, որ Հանձնաժողովը չի հաստատել «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանությունը:

6. Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների կարգավորման գործառույթը Հանձնաժողովն իրականացնում է 2008 թվականից՝ «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան: Մասնավորապես, նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, սակագների ձևավորման սկզբունքներն են՝

- միանմանությունն ու միասնականությունը բոլոր ծառայություն մատուցողների համար ՀՀ ողջ տարածքում,
- ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների և նյութական ակտիվների մաշվածության փոխհատուցման ապահովումը,
- մատչելիությունը՝ տվյալ ծառայության բոլոր սպառողների համար,
- ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը,
- մատուցվող ծառայության որակի բարձրացման խթանների ստեղծումը,
- հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,
- տրանսպորտային միջոցների տեսակներով ու առանձնահատկություններով պայմանավորված սակագների տարբերակումը:

Ի տարբերություն մյուս բնագավառների, Հանձնաժողովը տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման սակագները սահմանում է ոչ թե լիցենզավորված անձանց հայտի, այլ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ներկայացրած առաջարկությունների հիման վրա: ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի №690Ն որոշմամբ հաստատված ՀՀ-ում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետով ամրագրվել են այն սակագները, որոնցով ծառայություններ մատուցող անձինք մինչև Հանձնաժողովի կողմից տեխնիկական զննության անցկացման սակագների

սահմանումն ու դրանց ուժի մեջ մտնելը պետք է անցկացնեն տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն:

Հիմք ընդունելով վերը նշված օրենքի 3-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը 2008թ. մարտի 28-ի №149Ն որոշմամբ հաստատել է տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման կարգը, որով հաստատվել են նաև ծառայություններ մատուցող անձանց կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հանձնաժողովն անմիջականորեն չի հարաբերվում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայություններ մատուցող անձանց հետ, նրանցից հաշվետվություններ չի ստանում և, հետևաբար, չի կարող վերահսկել հաշվետվություններում առկա տեղեկատվության արժանահավատությունը, որի արդյունքում նաև դժվարություններ կարող է ունենալ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման նոր սակագների սահմանման ժամանակ:

Վերահսկողությամբ արձանագրվել է, որ գործող օրենսդրության պայմաններում Հանձնաժողովը չի ստացել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման հայտ, իր նախաձեռնությամբ սակագների սահմանման գործընթաց չի իրականացրել, որի արդյունքում դեռևս գործում են ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի №690Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետով ամրագրված սակագները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի սարքերը միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար պահանջվող կանխավճարի նվազեցումը կարող է էապես խթանել սպառողների

կողմից ինդուկցիոն հաշվիչները բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու գործընթացը, որը հնարավորություն կտա ավելի մեծ թվով սպառողների օգտվելու էլեկտրաէներգիայի գիշերային գեղջ սակագներից:

2. Փոքր ու միջին բիզնեսի զարգացումը խթանելու նպատակով Հանձնաժողովն իր որոշումներով կրճատել է 0.4 (0.22) կՎ լարման սպառողների սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու վճարները: Սակայն, այդ հատվածի բիզնեսը ներկայացնող սպառողներ կան նաև 6 (10) կՎ լարման սպառողական խմբում, որոնց միացման պայմանների և վճարների մասով Հանձնաժողովը որևէ միջոցառում չի իրականացրել:

3. Գազամատակարարման համակարգում մատակարարի և սպառողների փոխհարաբերությունները կանոնակարգող բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում նախատեսված չեն տույժեր՝ մատակարարի կողմից այդ կանոնների պահանջները խախտելու համար, ինչի արդյունքումը առավելագույնս կպաշտպաներ սպառողների շահերը:

4. Բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարները չեն վերանայվել սահմանման պահից՝ 2005 թվականից ի վեր, մինչդեռ, անցած շուրջ 6 տարիների ընթացքում փոխվել են բազմաթիվ գործոններ, որոնք կարող են նվազեցնել բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարները:

5. Հանձնաժողովի 2007թ. օգոստոսի 24-ի №340Ն և 2007թ. նոյեմբերի 16-ի №530Ն որոշումներով հաստատված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների ցանկը չի համապատասխանում Հանձնաժողովի 2008թ. մայիսի 20-ի №273Ա որոշմամբ հաստատված սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկին:

6. Ներկայումս կառուցվածքային փոփոխության է ենթարկվել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկան և միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների համար «ԱրմենՏել» և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն»

ընկերությունների կողմից առաջարկվում են Հանձնաժողովի սահմանած սակագներից զգալիորեն ցածր սակագներ:

7. Հանձնաժողովը «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից սակագների վերանայման հայտ չի ստացել և իր որոշմամբ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագներ չի սահմանել, որի արդյունքում դեռևս գործում են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2001թ. դեկտեմբերի 28-ին հաստատված ՀՀ տարածքում փոստային կապի ծառայությունների սակագները:

8. Հանձնաժողովը փոստային կապի ազգային օպերատորի համար չի մշակել և սահմանել փոստային առաքման ծավալների վերաբերյալ հաշվետվությունների ձևեր և չի ստանում ընկերության կողմից առաքված՝ նամակագրական թղթակցության, փոստային ծանրոցների ու բեռնարկերի, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակությունների ծավալային և քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, ինչն անհրաժեշտ կլինի փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման և վերանայման համար:

9. Երկաթուղային տրանսպորտի գործունեության շուկայում այլընտրանքային փոխադրողներ չկան, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն համապատասխան հայտ չի ներկայացրել, որի արդյունքում սահմանված չեն ենթակառուցվածքի օգտագործման վճարները:

10. Հանձնաժողովը չի մշակել և հաստատել երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանություն:

11. Հանձնաժողովը չի ստացել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման հայտ, իր նախաձեռնությամբ սակագների սահմանման գործընթաց չի իրականացրել, որի արդյունքում դեռևս գործում են ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի №690Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետով ամրագրված սակագները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝

- փոփոխել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով հաստատված առնտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար պահանջվող կանխավճարի մեծությունը՝ սահմանելով կանխավճարի ավելի մատչելի չափ,
- փոքր ու միջին բիզնեսի զարգացման հետագա խթանման նպատակով համապատասխան քայլեր ձեռնարկել 6 (10) կՎ լարման սպառողների սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների կրճատման և վճարների նվազեցման ուղղությամբ,
- փոփոխություն կատարել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում և նախատեսել մատակարարի նկատմամբ կիրառվող տույժերի համակարգ՝ այդ կանոններով սահմանված պահանջները խախտելու համար,
- վերլուծել և գնահատել բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարների մեծության վրա անցած շուրջ 6 տարիների ընթացքում փոփոխված գործոնների ազդեցությունը և սպասարկման վճարների նվազեցման հնարավորությունը,
- վերանայել 2009թ. հոկտեմբերի 14-ի №641Ա և 2009թ. նոյեմբերի 18-ի №728Ա որոշումները՝ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր ճանաչել ըստ շուկայի ներկայիս կառուցվածքի և վերջինիս համար սահմանել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների մատուցման նոր առավելագույն սակագին:
- փոստային կապի ազգային օպերատորի համար սահմանել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևեր:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով իրականացված միջոցառումների վերաբերյալ:

22 հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2008 թվականից մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ սակագների սահման:

h/h	Բնագավառներ	2008 թվական		2009 թվական		2010 թվական		2011 թվականի կիսա
		սահմա-նում	վերանա-յում	սահմա-նում	վերանա-յում	սահմա-նում	վերանա-յում	սահմա-նում
1	Էներգետիկայի բնագավառ, այդ թվում՝	10	44	13	72	21	89	8
1.1	Էլեկտրաէներգետիկական համակարգ	10	43	13	68	20	86	8
1.1.1	Խոշոր արտադրող կայաններ	0	4	0	11	1	6	0
1.1.2	Փոքր ՀԷԿ -եր	9	35	12	47	18	71	8
1.1.3	Կոգեներացիոն կայաններ	0	1	1	2	1	4	0
1.1.4	Այլ վերականգնվող էներգիայի աղբյուրներ	1	2	0	2	0	2	0
1.1.5	Համակարգին ծառայություններ մատուցողներ	0	1	0	5	0	3	0
1.1.6	Հայաստանի էլեկտրական ցանցեր	0	0	0	1	0	0	0
1.2	Գազամատակարարման համակարգ	0	0	0	2	0	2	0
1.2.1	«Հայմուսգազարդ» ՓԲԸ	0	0	0	1	0	1	0
1.2.2	«Տրանսգազ» ՍՊԸ	0	0	0	1	0	1	0
1.3	Ջերմամատակարարման համակարգ	0	1	0	2	1	1	0
2	Ջրային համակարգ, այդ թվում՝	0	1	0	2	2	4	0
2.1	Խմելու ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում	0	1	0	2	1	4	0
2.2	Ոռոգման ջրի մատակարարում	0	0	0	0	1	0	0
3	Հեռահաղորդակցության բնագավառ	0	0	6	0	3	0	0
4	Փոստային կապի բնագավառ	0	0	0	0	0	0	0
5	Երկաթուղային տրանսպորտի բնագավառ	0	0	0	0	0	0	0
6	Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ	0	0	0	0	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ		10	45	19	74	26	93	8



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ**

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 522522, ՖԱՔՍ (374-10) 525563

« _____ » _____ 2013 թ.

№ _____

***ՀՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին***

Ի պատասխան Ձեր 23.01.2013թ.
№02/23.16/795-13 գրության

Հարգելի պարոն Սարգսյան,

Ձեզ են ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 23.12.2011թ. №33/3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագների սահմանման արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների ընթացիկ հաշվետվությունում ամրագրված առաջարկությունների ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերջնական արդյունքների վերաբերյալ տեղեկանքը և հանձնաժողովի համապատասխան որոշումները (կցվում են):

Կատարված աշխատանքների մասին հանձնաժողովը 16.01.2012թ. №ՌՆ-047Ս, 02.07.2012թ. №ՌՆ-1237Ս և 14.12.2012թ. №ՌՆ-2242Ս գրություններով տեղեկացրել է ՀՀ վերահսկիչ պալատին:

Կից՝ 42 էջ:

Դ. Նազարյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 23.12.2011թ. №33/3 որոշմամբ հաստատված` ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ` Հանձնաժողով) կողմից սակագների սահմանման արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների ընթացիկ հաշվետվությունում ամրագրված առաջարկությունների ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերջնական արդյունքների վերաբերյալ

h/h	Արձանագրված փաստը և առաջարկությունը	Կատարման ընթացքը
1	Էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի սարքերը միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար պահանջվող կանխավճարի նվազեցումը կարող է էապես խթանել սպառողների կողմից ինդուկցիոն հաշվիչները բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու գործընթացը, որը հնարավորություն կտա ավելի մեծ թվով սպառողների օգտվելու էլեկտրաէներգիայի գիշերային զեղչ սակագներից: Առաջարկվել է փոփոխել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով հաստատված առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար պահանջվող կանխավճարի մեծությունը` սահմանելով կանխավճարի ավելի մատչելի չափ:	Կատարված է: Ընդունվել է Հանձնաժողովի 07.12.2011թ. №567Ն որոշումը, որն ուժի մեջ է մտել 01.04.2012թ-ից (կցվում է):
2	Փոքր ու միջին բիզնեսի զարգացումը խթանելու նպատակով Հանձնաժողովն իր որոշումներով կրճատել է 0.4 (0.22) կՎ լարման սպառողների սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու վճարները: Սակայն, այդ հատվածի բիզնեսը ներկայացնող սպառողներ կան նաև 6 (10) կՎ լարման սպառողական խմբում, որոնց միացման պայմանների և վճարների մասով Հանձնաժողովը որևէ միջոցառում չի իրականացրել: Առաջարկվել է փոքր ու միջին բիզնեսի զարգացման հետագա խթանման նպատակով համապատասխան քայլեր ձեռնարկել 6 (10) կՎ լարման սպառողների սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների կրճատման և վճարների նվազեցման ուղղությամբ:	Կատարված է: Ընդունվել են Հանձնաժողովի 07.12.2011թ. №566Ն և №568Ն որոշումները, որոնք ուժի մեջ են մտել 15.01.2012թ-ից (կցվում են):

3	Գազամատակարարման համակարգում մատակարարի և սպառողների փոխհարաբերությունները կանոնակարգող բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում նախատեսված չեն տույժեր՝ մատակարարի կողմից այդ կանոնների պահանջները խախտելու համար, ինչի առկայությունը առավելագույնս կպաշտպաներ սպառողների շահերը: Առաջարկվել է փոփոխություն կատարել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում և նախատեսել մատակարարի նկատմամբ կիրառվող տույժերի համակարգ՝ այդ կանոններով սահմանված պահանջները խախտելու համար:	Կատարված է: Ընդունվել է Հանձնաժողովի 14.11.2012թ. №451Ն որոշումը, որն ուժի մեջ է մտել 01.01.2013թ-ից (կցվում է):
4	Բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարները չեն վերանայվել սահմանման պահից՝ 2005 թվականից, ի վեր, մինչդեռ անցած շուրջ 6 տարիների ընթացքում փոխվել են բազմաթիվ գործոններ, որոնք կարող են նվազեցնել բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարները: Առաջարկվել է վերլուծել և գնահատել բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարների մեծության վրա անցած շուրջ 6 տարիների ընթացքում փոփոխված գործոնների ազդեցությունը և սպասարկման վճարների նվազեցման հնարավորությունը:	Կատարված է: Ընդունվել է Հանձնաժողովի 12.12.2012թ. №516Ն որոշումը, որն ուժի մեջ կմտնի 01.07.2013թ-ից (կցվում է):
5	Հանձնաժողովի 2007թ. օգոստոսի 24-ի №340Ն և 2007թ. նոյեմբերի 16-ի №530Ն որոշումներով հաստատված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների ցանկը չի համապատասխանում Հանձնաժողովի 2008թ. մայիսի 20-ի №273Ա որոշմամբ հաստատված սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկին:	Կատարված է: Ընդունվել են Հանձնաժողովի 28.12.2011թ. №617Ա, №618Ն և №619Ն որոշումները, որոնցից 1-ինն ուժի մեջ է մտել ստորագրման պահից, իսկ վերջին 2-ը՝ 01.03.2012թ-ից (կցվում են):
6	Ներկայումս կառուցվածքային փոփոխության է ենթարկվել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկան և միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների համար «ԱրմենՏել» և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերությունների	Կատարված է: Ընդունվել են Հանձնաժողովի 12.10.2011թ. №477Ա և №478Ա որոշումները, որոնցից 1-ինն ուժի

	կողմից առաջարկվում են Հանձնաժողովի սահմանած սակագներից զգալիորեն ցածր սակագներ: Առաջարկվել է վերանայել 2009թ. հոկտեմբերի 14-ի №641Ա և 2009թ. նոյեմբերի 18-ի №728Ա որոշումները՝ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր ճանաչել ըստ շուկայի ներկայիս կառուցվածքի և վերջինիս համար սահմանել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների մատուցման նոր առավելագույն սակագին:	մեջ է մտել ստորագրման պահից, իսկ 2-րդը՝ 15.11.2011թ-ից (կցվում են):
7	Հանձնաժողովը փոստային կապի ազգային օպերատորի համար չի մշակել և սահմանել փոստային առաքման ծավալների վերաբերյալ հաշվետվությունների ձևեր և չի ստանում ընկերության կողմից առաքված՝ նամակագրական թղթակցության, փոստային ծանրոցների ու բեռնարկղերի, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակությունների ծավալային և քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, ինչն անհրաժեշտ կլինի փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման և վերանայման համար: Առաջարկվել է փոստային կապի ազգային օպերատորի համար սահմանել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևեր:	Կատարված է: Ընդունվել է Հանձնաժողովի 15.02.2012թ. №36Ա որոշումը, որն ուժի մեջ է մտել ստորագրման պահից (կցվում է):
8	Հանձնաժողովը չի մշակել և հաստատել երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանություն:	Կատարված է: Ընդունվել է Հանձնաժողովի 05.12.2012թ. №501Ա որոշումը, որն ուժի մեջ է մտել ստորագրման պահից (կցվում է):



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 հոկտեմբերի 2011 թվականի № 477Ա
քաղ. երևան

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ «ԱՅՓԻ» ՏԱՐԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔ
ԶԲԱՂԵՑՆՈՂ ՕՊԵՐԱՏՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ, 23-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 22-ի «Միջազգային» «ԱՅՓԻ» (IP) տարանցման ծառայությունը դասակարգելու, միջազգային «ԱՅՓԻ» (IP) տարանցման ծառայությունների շուկան և այդ շուկայում անձի գերիշխող դիրք զբաղեցնելու չափորոշիչ սահմանելու մասին» №391Ն որոշումը և

հաշվի առնելով, որ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների վերաբերյալ 2011 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունների վերլուծության արդյունքում՝ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների իրացվող ընդհանուր ծավալը (ներառյալ այլ ծառայությունների համար օգտագործվող ծավալը, Մբիթ/վ) կազմել է 67 տոկոս՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ճանաչել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 14-ի «Միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում «ԱրմենՏել» փակ բաժնետիրական և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ ճանաչելու մասին» №641Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 հոկտեմբերի 2011թ.
Ժամը 16⁰⁰



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 հոկտեմբերի 2011 թվականի №478Ա
քաղ. Երևան

**«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ «ԱՅՓԻ» ՏԱՐԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱԿԱԳԻՆԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի «Միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր ճանաչելու մասին» №477Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության 1 Մբիթ/վայրկյան արագությամբ տվյալների հոսքի առավելագույն սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P = 86.6 * E + 3540$$

որտեղ՝ P-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության 1 Մբիթ/վայրկյան արագությամբ տվյալների հոսքի առավելագույն սակագինն է (դրամ/ամիս)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսի 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ

դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում
ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

2. Սահմանել, որ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք
բերված միջազգային «ԱՅՓԻ» տարանցման կապուղու թողունակության առնվազն 15
տոկոսը պետք է օգտագործվի որպես պահուստ:

3. «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետի
համաձայն հաշվարկվող առավելագույն սակագնից ցածր սակագնի կիրառման դեպքում
կիրառվող սակագնի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային
կայքում, ինչպես նաև կիրառման պահից 5 օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի
Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 18-ի
«ԱրմենՏել» փակ բաժնետիրական և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությունների կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ»
տարանցման ծառայության առավելագույն սակագինը սահմանելու մասին» №728Ա
որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի նոյեմբերի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

7 դեկտեմբերի 2011 թվականի №566Ն
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №358Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում (այսուհետ՝ Կանոններ), կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Կանոնների 13.4 կետը լրացնել 2.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) 6(10) կՎ լարման ցանցին միացման դեպքում՝ 60 օրը».

2) Կանոնների 13.5 կետի 4-րդ ենթակետում «6 ամիսը» բառերը փոխարինել «120 օրը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 15-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

7 դեկտեմբեր 2011 թվականի №567Ն
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №358Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի առաջին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների, 69-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«69. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը սպառողի պահանջով իրականացվում է կանխավճարի հետևյալ չափերի վճարման պայմանով.

ա) միաֆազ ինդուկցիոն հաշվիչը միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար՝ 10000 (տասը հազար) դրամ,

բ) եռաֆազ ինդուկցիոն հաշվիչը եռաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

7 դեկտեմբերի 2011 թվականի №568Ն
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №659Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման 1-ին կետով հաստատված «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները» հավելվածում (այսուհետ՝ Հավելված)՝ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 1-ին կետի «Վ_{ստ}» և «Վ_{լրաց}» պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

«Վ_{ստ}»՝ համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմաններում՝ անկախ էլեկտրական ցանցին միացման կետի հեռավորությունից, իսկ համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս՝ էլեկտրական ցանցին միացման կետից մինչև 200 մետր հեռավորության վրա գտնվող սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման

վճարի ստանդարտ բաղադրիչն է (ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքը, ավտոմատ անջատիչները էլեկտրահաղորդման գիծը)՝ համաձայն №1 մեթոդիկայի (հավելված):

$\Phi_{\text{լրաց}}$ – էլեկտրական ցանցին միացման վճարի լրացուցիչ բաղադրիչն է, որը համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանում ընդունվում է հավասար զրոյի: Համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս $\Phi_{\text{լրաց}}$ -ը ներառում է՝

- 1) էլեկտրական ցանցին միացման կետից 200 մետրը գերազանցող՝ սնող էլեկտրահաղորդման գծի կառուցման արժեքը,
 - 2) սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ (այսուհետ՝ ՏՏՀ) նոր սպառողի կամ կառուցապատողի կամ սպառողի (այսուհետ՝ Դիմող անձ) կողմից պահանջվածից ավելի բարձր լարման սնող գծի և ենթակայանի կառուցման անհրաժեշտության դեպքում՝ այդ ենթակառուցվածքների կառուցման արժեքը:»:
- 2) Հավելվածի 4-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 4. 6(10) ԿՎ ԼԱՐՄԱՄԲ ՄԻԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

13. 6(10) կՎ լարմամբ միացող առևտրային սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$\text{ՄՎ} = \Phi_{\text{ստ}} + \Phi_{\text{լրաց}} + \Phi_{\text{պահուստ}},$$

որտեղ՝

$\Phi_{\text{ստ}}$ – էլեկտրական ցանցին միացման կետից մինչև 1200 մետր հեռավորության վրա գտնվող սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման վճարի ստանդարտ բաղադրիչն է (ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքը, ավտոմատ անջատիչները, էլեկտրահաղորդման գիծը)՝ համաձայն №2 մեթոդիկայի (հավելված):

Վ_{լրաց}– էլեկտրական ցանցին միացման վճարի լրացուցիչ բաղադրիչն է, որը ներառում է՝

- 1) 1200 մետրը գերազանցող՝ սնող էլեկտրահաղորդման գծի կառուցման արժեքը,
- 2) ՏՏՀ-ով Դիմող անձի կողմից պահանջվածից ավելի բարձր լարման սնող գծի և ենթակայանի կառուցման անհրաժեշտության դեպքում՝ այդ ենթակառուցվածքների կառուցման արժեքը:

Վ_{պահուստ}–սպառման համակարգի պահուստային սնում ապահովող էլեկտրահաղորդման գծի կառուցման արժեքն է:»:

3) Հավելվածի N1 մեթոդիկայի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. 0.4 կՎ լարմամբ միացվող առանձնատների և առևտրային սպառողների սպառման համակարգերի ստանդարտ միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$V_{\text{ստ}} = V_h + V_{\text{փ}} * \eta_{\text{հգ}} * \sigma_q,$$

որտեղ՝

Վ_հ– հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 203000 (երկու հարյուր երեք հազար) դրամի,

Վ_փ– փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար ընդունվում է հավասար 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամի,

η_{հգ}– Դիմող անձի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ),

σ_q – ծախսատարության գործակիցն է, որը Երևան քաղաքի վարչական տարածքում ընդունվում է հավասար 1.4-ի, Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ հավասար 1-ի:»:

4) Հավելվածի №4 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մեթոդիկա 2. 6(10) կՎ լարմամբ միացող առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները

1. 6(10) կՎ լարմամբ միացվող սպառողների սպառման համակարգերի ստանդարտ միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$\Psi_{\text{ստ}} = \Psi_{\text{հ}} + \Psi_{\text{փ}} * \eta_{\text{հգ}} * \sigma_{\text{գ}},$$

որտեղ՝

$\Psi_{\text{հ}}$ - հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 846000 (ութ հարյուր քառասունվեց հազար) դրամի,

$\Psi_{\text{փ}}$ - փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար ընդունվում է հավասար 2150 (երկու հազար հարյուր հիսուն) դրամի,

$\eta_{\text{հգ}}$ - Դիմող անձի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ),

$\sigma_{\text{գ}}$ – ծախսատարության գործակիցն է, որը Երևան քաղաքի վարչական տարածքում ընդունվում է հավասար 1.4-ի, Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ հավասար 1-ի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
7 դեկտեմբերի 2011թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 դեկտեմբերի 2011 թվականի №617Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի №273Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 20-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը հաստատելու մասին» №273Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկում (այսուհետ՝ Ցանկ), կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Ցանկի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.4 ենթակետով.

« 3.4 Հեռախոսահամարի փոխում »,

2) Ցանկի 5-րդ կետում «Վերջնական օգտագործողի համար հանրային» բառերը փոխարինել «Հանրային» բառով.

3) Ուժը կորցրած ճանաչել Ցանկի 6-րդ կետը.

4) Ցանկի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

« 8	Գծի ենթակառուցվածքների տրամադրման և վարձակալության ծառայություններ
8.1	Խողովակների տրամադրման և վարձակալության ծառայություն
8.2	Ուղիղ գծերի տրամադրման և վարձակալության ծառայություն
8.3	Միացնող գծի տրամադրման և վարձակալության ծառայություն
8.4	Միջբաղաժային կապուղու վարձակալության ծառայություն

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 դեկտեմբերի 2011 թվականի №618Ն
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի №340Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» №340Ն որոշման 1-ին կետով հաստատված՝

- 1) «ISDN (2B+D) BRA 128 կբթ/վրկ հիմնական և լրացուցիչ ծառայությունների առավելագույն սակագներ» №2 հավելվածի «I. Հիմնական միանվագ ծառայություններ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ կետերով.

« 3	ISDN-2(2B+D) 128կբթ/վրկ վերատեղադրում նույն շենքում	գծի			
3.1	բնակիչ բաժանորդի համար		4541.67	908.33	5450.0
3.2	գործարար բաժանորդի համար		4541.67	908.33	5450.0
4	ISDN-2(2B+D) 128կբթ/վրկ վերատեղադրում այլ շենքում	գծի			
4.1	բնակիչ բաժանորդի համար		9083.33	1816.67	10900.0
4.2	գործարար բաժանորդի համար		9083.33	1816.67	10900.0

»,

2) «2048 կբիթ/վրկ E-1 և ISDN 30B+D (PRA) թվային կապուղիների առավելագույն սակագներ» №3 հավելվածը շաբաղրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №1 հավելվածի.

3) «Միջբաղադային, դեպի բջջային ցանցեր և միջազգային զանգերի առավելագույն սակագներ» №4 հավելվածը շաբաղրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 դեկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի դեկտեմբերի 28-ի №618Ն որոշման

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի
№340Ն որոշմամբ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱԿԱԳՆԵՐ

2048 ԿԲԻԹ/ՎՐԿ E-1 ԵՎ ISDN 30B+D (PRA) ԹՎԱՅԻՆ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ

h/h	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	Սակագինը (առանց ավելացված արժեքի հարկի)	Ավելացված արժեքի հարկ	Սակագինը (ներառյալ ավելացված արժեքի հարկը)
1	Առանց հանրային ամրակցված հեռախոսային ցանցին միանալու հնարավորության 2048 կբիթ/վրկ թողունակությամբ E-1 կապուղու տեղադրման ծառայություն				
1.1	<i>I գոտի (0-25 կմ կապուղի)</i>	դրամ	113 208,33	22 641,67	135 850,0
1.2	<i>II գոտի (26-50 կմ կապուղի)</i>	դրամ	181 166,67	36 233,33	217 400,0
1.3	<i>III գոտի (51-100 կմ կապուղի)</i>	դրամ	317 000,0	63 400,00	380 400,0
1.4	<i>IV գոտի (101-200 կմ կապուղի)</i>	դրամ	486 833,33	97 366,67	584 200,0
1.5	<i>V գոտի (201 կմ և ավելի կապուղի)</i>	դրամ	520 791,67	104 158,33	624 950,0
1.6	<i>Երկու կետերի (բնակավայրերի) հեռավորությունը հաշվարկվում է ուղիղ թռիչքով 1:500000 մաշտաբի քարտեզով</i>				
1.7	<i>2048 կբիթ/վրկ թվային կապուղիները տրամադրվում են 2 կետերի միջև: Միջանկյալ տեղամասերում ելքի և (կամ) մուտքի տրամադրումը համարվում է որպես առանձին կապուղու տրամադրում:</i>				
2	Առանց հանրային ամրակցված հեռախոսային ցանցին միանալու հնարավորության 2048 կբիթ/վրկ թողունակությամբ E-1 կապուղու բաժանորդային ծառայություն				
2.1	<i>I գոտի (0-25 կմ կապուղի)</i>	դրամ/ամիս	45 250,00	9 050,00	54 300,0
2.2	<i>II գոտի (26-50 կմ կապուղի)</i>	դրամ/ամիս	72 413,33	14 482,67	86 896,0
2.3	<i>III գոտի (51-100 կմ կապուղի)</i>	դրամ/ամիս	126 706,67	25 341,33	152 048,0
2.4	<i>IV գոտի (101-200 կմ կապուղի)</i>	դրամ/ամիս	194 590,00	38 918,00	233 508,0
2.5	<i>V գոտի (201 կմ և ավելի կապուղի)</i>	դրամ/ամիս	208 163,33	41 632,67	249 796,0
2.6	<i>Երկու կետերի (բնակավայրերի) հեռավորությունը հաշվարկվում է ուղիղ թռիչքով 1:500000 մաշտաբի քարտեզով</i>				
2.7	<i>2048 կբիթ/վրկ թվային կապուղիները տրամադրվում են 2 կետերի միջև: Միջանկյալ տեղամասերում ելքի և (կամ) մուտքի տրամադրումը համարվում է որպես առանձին կապուղու տրամադրում:</i>				
3	Հանրային ամրակցված հեռախոսային ցանցին միանալու հնարավորությամբ 2048 կբիթ/վրկ թողունակությամբ E-1 կապուղի				
3.1	ISDN 30B+D (PRA) 2048 կբիթ/վրկ թողունակության հոսքի տեղադրման ծառայություն (1 հեռախոսահամարի միացումով)՝ ներառյալ ելքային զանգի հնարավորությունը	դրամ	384 000,00	76 800,00	460 800,0
3.2	ISDN 30B+D (PRA) 2048 կբիթ/վրկ թողունակության հոսքի տեղադրման ծառայություն (1 հեռախոսահամարի միացումով)՝ առանց ելքային զանգի հնարավորության	դրամ	192 000,00	38 400,00	230 400,0

h/h	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	Սակագինը (առանց ավելացված արժեքի հարկի)	Ավելացված արժեքի հարկ	Սակագինը (ներառյալ ավելացված արժեքի հարկը)
3.3	ISDN 30B+D (PRA) 2048 կբիթ/վրկ թողունակության հոսքի բաժանորդային ծառայություն՝ ներառյալ ելքային զանգի հնարավորությունը	դրամ/ամիս	126 833,33	25 366,67	152 200,0
3.4	ISDN 30B+D (PRA) 2048 կբիթ/վրկ թողունակության հոսքի բաժանորդային ծառայություն՝ առանց ելքային զանգի հնարավորության	դրամ/ամիս	63 416,67	12 683,33	76 100,0
3.5	2048 կբիթ/վրկ թողունակության հանրային ամրակցված հեռախոսային ցանցին միանալու հնարավորությամբ թվային կապուղիների տեղական խոսակցությունների և ինտերնետ հասանելիության ծառայությունների բույսավաճարներ (մեկ կապուղու համար)				
3.5.1	<i>Անվճար տեղական խոսակցությունների և ինտերնետ հասանելիության ծառայության չափաքանակը (յուրաքանչյուր E-1 կապուղու համար)</i>	բույս/ամիս	10 800,0		
3.5.2	<i>Տեղական զանգ՝ 10801 բույսից մինչև 48000 բույս ամսական</i>	դրամ/բույս	4,17	0,83	5,0
3.5.3	<i>Տեղական զանգ՝ ամսական 48001 բույս և ավելի</i>	դրամ/բույս	7,50	1,50	9,0
3.5.4	<i>Ամսական 10801 բույս և ավելի տնողության դեպքում ինտերնետ հասանելիության համար զանգի բույսավճար</i>	դրամ/բույս	0,83	0,17	1,0

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի դեկտեմբերի 28-ի №618Ն որոշման

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի
№340Ն որոշմամբ ..

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱԿԱԳՆԵՐ

ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ, ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՐԺԱԿԱՆ
ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՑԱՆՅԵՐ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԲ
ԶԱՆԳԵՐԻ

h/h	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	Սակագինը (առանց ավելացված արժեքի հարկի)	Ավելացված արժեքի հարկ	Սակագինը (ներառյալ ավելացված արժեքի հարկը)
1	Միջքաղաքային հեռախոսային ծառայություն				
1.1	բնակիչ բաժանորդի համար՝ ժամը 07:00 - 23:00	դրամ/րոպե	16,67	3,33	20,0
1.2	բնակիչ բաժանորդի համար՝ ժամը 23:00 - 07:00	դրամ/րոպե	11,67	2,33	14,0
1.3	գործարար բաժանորդի համար՝ ժամը 07:00 - 23:00	դրամ/րոպե	20,0	4,0	24,0
1.4	գործարար բաժանորդի համար՝ ժամը 23:00 - 07:00	դրամ/րոպե	14,0	2,8	16,8
2	Դեպի հանրային շարժական բջջային կապի ցանցեր զանգերի ծառայություն				
2.1	ժամը 07:00 - 23:00	դրամ/րոպե	58,33	11,67	70,0
2.2	ժամը 23:00 - 07:00	դրամ/րոպե	40,83	8,17	49,0
3	Դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք զանգերի ծառայություն				
3.1	Դեպի ամրակցված ցանց՝ բնակիչ բաժանորդի համար (ժամը 07:00 - 23:00)	դրամ/րոպե	16,67	3,33	20,0
3.2	Դեպի ամրակցված ցանց՝ բնակիչ բաժանորդի համար (ժամը 23:00 - 07:00)	դրամ/րոպե	11,67	2,33	14,0
3.3	Դեպի ամրակցված ցանց՝ գործարար բաժանորդի համար (ժամը 07:00 - 23:00)	դրամ/րոպե	20,0	4,0	24,0
3.4	Դեպի ամրակցված ցանց՝ գործարար բաժանորդի համար (ժամը 23:00 - 07:00)	դրամ/րոպե	14,0	2,8	16,8
3.5	Դեպի հանրային շարժական բջջային կապի ցանց՝ ժամը 07:00 - 23:00	դրամ/րոպե	58,33	11,67	70,0
3.6	Դեպի հանրային շարժական բջջային կապի ցանց՝ ժամը 23:00 - 07:00	դրամ/րոպե	40,83	8,17	49,0



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 դեկտեմբերի 2011 թվականի №619Ն
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի №530Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 16-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող առանձին ծառայությունների սակագների սահմանման մասին» №530Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) Որոշման 1-ին կետով հաստատված «Հիմնական տեղական հեռախոսակապի առանձին ծառայությունների առավելագույն սակագներ» №1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №1 հավելվածի.
- 2) Ուժը կորցրած ճանաչել Որոշման 1-ին կետով հաստատված «Հանրային համակցման հեռախոսային ցանցի լրացուցիչ ծառայությունների (թվային կայանների բաժանորդների համար) առավելագույն սակագներ» №2, «ISDN (2B+D) BRA 128 կբիթ/վրկ լրացուցիչ ծառայությունների առավելագույն սակագներ» №3, «Հանրային ինտերնետի միջոցով ձայնի փոխանցման ծառայության

առավելագույն սակագներ» №6 և «Քառանիշ (8-xxx) համարներով հեռախոսագծերի տրամադրման ծառայությունների առավելագույն սակագներ» №7 հավելվածները.

3) Որոշման 1-ին կետով հաստատված «800 հատուկ ծառայության առավելագույն սակագներ» №4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

Հավելված №1

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի դեկտեմբերի 28-ի №619Ն
որոշման

Հավելված №1

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 16-ի
№530Ն որոշմամբ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱԿԱԳՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԱՌԱՆՁԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

դրամ

h/h	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մակագինը (առանց ավելացված արժեքի)	Ավելացված արժեքի հարկ	Մակագինը (ներառյալ ավելացված արժեքի)
1	Հիմնական հեռախոսագծի ժամանակավոր տեղադրում (մեկ ամսից ոչ ավել)			
1.1	Բնակիչ բաժանորդի համար	8 000,00	1 600,00	9 600,00
1.2	Գործարար բաժանորդի համար	10 000,00	2 000,00	12 000,00
2	Միացնող գծի տրամադրում՝ անկախ գծերի քանակից (միացնող զիծը որպես ուղիղ գծի բաղադրիչ օգտագործելու դեպքում միացնող գծի տրամադրման վարձ չի գանձվում՝ անկախ միացնող գծերի քանակից)			
2.1	Բնակիչ բաժանորդի համար	41 666,67	8 333,33	50 000,00
2.2	Գործարար բաժանորդի համար	50 000,00	10 000,00	60 000,00
3	Ուղիղ գծի տրամադրում			
3.1	Բնակիչ բաժանորդի համար	41 666,67	8 333,33	50 000,00
3.2	Գործարար բաժանորդի համար	50 000,00	10 000,00	60 000,00
4	Հիմնական հեռախոսագծի վերատեղադրում նույն շենքում			
4.1	Բնակիչ բաժանորդի համար	5 000,00	1 000,00	6 000,00
4.2	Գործարար բաժանորդի համար	6 000,00	1 200,00	7 200,00
5	Հիմնական հեռախոսագծի վերատեղադրում այլ շենք			
5.1	Բնակիչ բաժանորդի համար	10 000,00	2 000,00	12 000,00
5.2	Գործարար բաժանորդի համար	12 000,00	2 400,00	14 400,00
6	Ուղիղ գծի վերատեղադրում նույն շենքում			
6.1	Բնակիչ բաժանորդի համար	20 833,33	4 166,67	25 000,00
6.2	Գործարար բաժանորդի համար	25 000,00	5 000,00	30 000,00
7	Ուղիղ գծի վերատեղադրում այլ շենք			
8.1	Բնակիչ բաժանորդի համար	41 666,67	8 333,33	50 000,00
9.2	Գործարար բաժանորդի համար	50 000,00	10 000,00	60 000,00
8	Զուգտակ հեռախոսահամարի տարանջատում			
8.1	Բնակիչ բաժանորդի համար (բաժանորդի նախաձեռնությամբ՝ յուրաքանչյուրից)	5 000,00	1 000,00	6 000,00
8.2	Գործարար բաժանորդի համար (բաժանորդի նախաձեռնությամբ՝ յուրաքանչյուրից)	6 000,00	1 200,00	7 200,00
8.3	Օպերատորի նախաձեռնությամբ	անվճար		
9	Հեռախոսագծի վերականգնում նախքան պայմանագրի խզումը (անկախ բաժանորդի կարգավիճակից)	5 000,00	1 000,00	6 000,00
10	Բաժանորդի անվանափոխություն	833,33	166,67	1 000,00
11	Հեռախոսահամարի փոխում			
11.1	Բնակիչ բաժանորդի համար (բաժանորդի նախաձեռնությամբ)	833,33	166,67	1 000,00
11.2	Գործարար բաժանորդի համար (բաժանորդի նախաձեռնությամբ)	1 000,00	200,00	1 200,00
11.3	Օպերատորի նախաձեռնությամբ	անվճար		
12	Զանգերի վերձանման (ներառյալ՝ տեղական, միջքաղաքային, միջազգային) տրամադրում՝ բաժանորդի ցանկության դեպքում (յուրաքանչյուր էջը)	8,33	1,67	10,00
13	Մատուցված ծառայությունների հաշվի առաքում բաժանորդին	83,33	16,67	100,00

Հավելված №2

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի
դեկտեմբերի 28-ի №619Ն որոշման

Հավելված №4

Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի
նոյեմբերի 16-ի №530Ն որոշմամբ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱԿԱԳՆԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂԻ ՀԱՄԱՐ
800 ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ՄԻԱՅՆ ՁԱՅՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻՆ
ՏՐԱՄԱԴԻՎԱԾ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ)

h/h	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	Սակագինը (առանց ավելացված արժեքի հարկի)	Ավելացված արժեքի հարկ	Սակագինը (ներառյալ ավելացված արժեքի հարկը)
1	Համարի գործարկման ծառայություն (յուրաքանչյուր համարի համար)	դրամ	12 000,0	2 400,0	14 400,0
2	Բաժանորդային վարձ (1 համարի համար)	դրամ/ամիս	4 000,0	800,0	4 800,0
3	Մուտքային զանգերի բուպեավճար				
3.1	Մուտքային տեղական զանգեր	դրամ/բուպե	5,83	1,17	7,00
3.2	Մուտքային միջքաղաքային զանգեր	դրամ/բուպե	9,17	1,83	11,00



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 փետրվարի 2012 թվականի №36Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի №629Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.2-րդ հոդվածի 8-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» №629Ա որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

- 1) Որոշման մեջ «ֆինանսական» բառը փոխարինել «ֆինանսատնտեսական» բառով.
- 2) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգի՝
 - ա. 2-րդ կետից հանել «հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2001 թվականի դեկտեմբերի 12-ի N465 հրամանով հաստատված կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերով, ինչպես նաև» բառերը.

բ. հավելվածը լրացնել նոր՝ №1-8 Ձևով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 փետրվարի 2012թ.
Ժամը՝ 16:00

1	2	3	4	5	6	7	8	9
2	Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև 20 կիլոգրամ բաշով ծանրոցների առաքման գծով ծառայություններ							
2.1	Երևանի փոստային բաժանմունքների միջոցով							
2.1.1								
2.2	Մարզերի փոստային բաժանմունքների միջոցով							
2.2.1								
3	Հայաստանի Հանրապետության տարածքի գյուղական բնակավայրերում պաշտոնական պարբերականների առաքման գծով ծառայություններ							
3.1								
4	«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փաստաթղթերի հատուկ առաքման գծով ծառայություններ							
4.1								

1. Ներկայացման ժամկետը՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1 -ը:

2. Սույն ձևով նախատեսված ցուցանիշները «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի:

/ընկերության ղեկավարի ստորագրությունը /

/անուն, ազգանուն/

Կ.Տ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 նոյեմբերի 2012 թվականի № 451Ն
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի №95Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №95Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը՝ «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները» լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-րդ և 12.2-րդ գլուխներով.

«ԳԼՈՒԽ 12.1

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1.1 Սպառողը մատակարարին կարող է դիմում (բողոք, հարցադրում) ներկայացնել գրավոր, բանավոր (այդ թվում՝ հեռախոսազանգի միջոցով) և էլեկտրոնային փոստի միջոցով, եթե սույն կանոններով առանձին դեպքերի համար այլ բան սահմանված չէ:

12.1.2 Սպառողի բանավոր դիմումին մատակարարի կողմից տրվում է բանավոր պատասխան, գրավոր դիմումին՝ գրավոր պատասխան, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

12.1.3 Մատակարարը սպառողի դիմումին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից 15 օրվա ընթացքում, եթե սույն կանոններով առանձին դեպքերի համար այլ ժամկետ սահմանված չէ:

12.1.4 Մատակարարը պարտավոր է սպառիչ պատասխան տալ սպառողի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով սպառողի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն սպառողին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ:

Գ Լ ՈՒ Խ 12.2

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՈՒՅԺԵՐԸ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

12.2.1 Մատակարարը պարտավոր է սպառողին վճարել տույժ՝ ծախսված բնական գազի միջին ամսական արժեքի 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2000 դրամը, այն դեպքերում, երբ խախտել է՝

- ա) սպառողի գազամատակարարման ընդհատումների վերաբերյալ սույն կանոնների 2.8-րդ կետով սահմանված պահանջները,
- բ) սպառողի պահանջով գազամատակարարման դադարեցման և վերականգնման սույն կանոնների 3.11-րդ կետով սահմանված ժամկետները,
- գ) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի արտահերթ ստուգաչափման սույն կանոնների 4.7-րդ կետով սահմանված ժամկետները,
- դ) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի արտահերթ ստուգաչափման սույն կանոնների 4.8-րդ կետով սահմանված կարգը,
- ե) բնական գազի վերահաշվարկի վերաբերյալ սույն կանոնների 4.10-րդ կետով սահմանված ժամկետները,
- զ) սպառողի գազամատակարարումը դադարեցնելուց հետո այն վերականգնելու սույն կանոնների 6.6-րդ և 8.6-րդ կետերով սահմանված ժամկետները,
- է) սպառողի բողոքին պատասխանելու սույն կանոնների 12.1.3-րդ կետով սահմանված ժամկետը:

12.2.2 Սպառողի կողմից ծախսված բնական գազի միջին ամսական արժեքն ընդունվում է տվյալ տարում սպառողի ծախսած բնական գազի արժեքի և տվյալ տարում ծախս ունեցած ամիսների քանակի քանորդին հավասար:

12.2.3 Հաշվարկված տույժը մատակարարը հաշվի է առնում սպառողին ընթացիկ ամսում ծախսած բնական գազի համար ներկայացվելիք վճարման հաշվում: Հաշվարկված տույժը վճարման հաշվում նշվում է առանձին տողով և նվազեցվում է ծախսված բնական գազի արժեքից:

12.2.4 Մատակարարը սույն կանոնների 12.2.1-րդ կետում նշված խախտումների համար տույժի չի ենթարկվում, եթե դա ֆորս մաժորի հետևանք է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**


Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

Երևան
14 նոյեմբերի 2012թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2012 թվականի № 501Ա
քաղ. Երևան

**«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հաստատել «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարի հաշվարկման մեթոդիկան (հավելված):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՄԵԹՈԴԻԿԱ

«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

Սույն մեթոդիկան սահմանում է փոխադրողի կողմից ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի (այսուհետ՝ ենթակառուցվածք) օգտագործման համար «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը տրվող ենթակառուցվածքի օգտագործման վճարի հաշվարկման սկզբունքները:

1. ՄԵԹՈԴԻԿԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն մեթոդիկայում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) Փոխադրող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և փոխադրման պայմանագրով պարտավորվում է ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով փոխադրել ուղևորներ, առաքողի կողմից իրենց վստահված բեռ, ուղեբեռ, բեռնածանրոց՝ առաքման կետից մինչև նշանակման վայր, ինչպես նաև հանձնել բեռը, ուղեբեռը դրանց ստացման համար իրավասու անձին, և կատարում է նշված գործառույթները՝ օգտագործելով երկաթուղային շարժակազմը և այլ համապատասխան սարքեր:

2) Ենթակառուցվածքի կառավարիչ կամ Ընկերություն՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն (կոնցեսիոն պայմանագրի կողմ), որը սեփականության կամ այլ իրավունքով ունի ենթակառուցվածք և երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզիա և պայմանագրի հիման վրա ենթակառուցվածքն օգտագործում է երկաթուղային տրանսպորտի ծառայություններ մատուցելու նպատակով:

3) Կոնցեսիոն պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության և «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի փետրվարի 13-

ին կնքված՝ «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիր:

4) Ենթակառուցվածքի (գծահատվածի) թողունակություն՝ երկաթուղային ենթակառուցվածքի տեխնիկական հնարավորություն, որն ապահովում է երկաթուղային փոխադրումներ՝ ըստ կոնկրետ տեսակի, հաճախականության, կանոնավորության և ծավալի:

5) Օգտագործման վճար՝ Փոխադրողի կողմից ենթակառուցվածքի օգտագործման համար ենթակառուցվածքի կառավարչին տրվող վճար:

2. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2. Օգտագործման վճարը տարբերակվում է ըստ ենթակառուցվածքի օգտագործման հիմնական և լրացուցիչ ծառայությունների.

1) ենթակառուցվածքի օգտագործման հիմնական ծառայություն է հանդիսանում կոնկրետ գծահատվածի թողունակության (մուտքի թույլտվության) տրամադրումը և երկաթուղային երթևեկության կազմակերպումը, որը ներառում է հանգուցային երկաթուղային կայարանների, ուղևորային հարթակների, գծային սարքավորումների, կապի և ազդանշանային սարքավորումների գործուն վիճակում պահելը և օգտագործման տրամադրելը,

2) ենթակառուցվածքի օգտագործման լրացուցիչ ծառայություններ են հանդիսանում ուղևորների սպասարկման համար անհրաժեշտ շենքերի և կառույցների, բեռնային տերմինալների, գնացքների տեսակավորման կայարանների, գնացքների ձևավորման սարքավորումների, կայանման գծերի օգտագործման տրամադրումը և այլն:

3. Փոխադրողը կարող է լրացուցիչ ծառայությունները պատվիրել միայն անհրաժեշտության դեպքում:

4. Օգտագործման վճարի սահմանման հիմքում դրվում է անհրաժեշտ հասույթի (ԱՀ) ապահովման սկզբունքը, ըստ որի ենթակառուցվածքի օգտագործման մասով հաշվարկվող անհրաժեշտ հասույթը պետք է բավարարի՝

1) Ենթակառուցվածքի օգտագործման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի (ՇՊԾ) իրականացմանը,

2) Ենթակառուցվածքի մասով օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի (ՄԱ) հատուցմանը,

3) Ենթակառուցվածքի մասով օգտագործվող ակտիվների դիմաց ողջամիտ շահույթի (Շ)

ապահովմանը:

5. Սույն մեթոդիկայի 4-րդ կետով նշված ԱՀ -ն որոշվում է ըստ հիմնական և լրացուցիչ ծառայությունների՝ հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = \mathcal{C}\mathcal{M}\mathcal{D} + \mathcal{M}\mathcal{A} + \mathcal{C}:$$

6. Շահագործման և պահպանման ծախսերի հաշվարկման համար հիմք են հանդիսանում «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմված և անկախ աուդիտորի կողմից հաստատված հաշվետվության տվյալները:

3. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

7. Օգտագործման վճարի հաշվարկում ներառվում են 12-ամսյա ժամանակաշրջանի (այսուհետ՝ Հաշվարկային տարի) ընթացքում կատարվող այն ՇՊԾ-ները, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են ենթակառուցվածքի օգտագործման համար:

8. Կարգավորման նպատակով օգտագործվում է ծախսերի հետևյալ դասակարգումը՝

1) աշխատանքի վարձատրության ծախսեր.

2) շահագործման համար անհրաժեշտ նյութական ծախսեր.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսեր:

9. Անհրաժեշտ հասույթի հաշվարկում ընդգրկվող ծախսերը որոշվում են Հաշվարկային տարվան նախորդող մեկ լիարժեք ֆինանսական տարում ՇՊԾ-ների կողմից կատարված փաստացի ծախսերի վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով օգտագործման վճարի սահմանման կամ վերանայման հայտ ներկայացնելու պահին հայտնի և կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները:

10. Ընկերության կառավարչական հաշվառման համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ծախսերը գրանցել և բաշխել ըստ ենթակառուցվածքի օգտագործման, այլ գործունեության (ներառյալ երկաթուղային տրանսպորտի այլ գործունեության) և ընդհանուր ծախսերի: Ընդհանուր ծախսերն այն ծախսերն են, որոնք հնարավոր չէ ուղղակիորեն և աներկիմաստ վերագրել որևէ գործունեության կամ

ծառայության:

11. Ծախսերի բաշխումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) ենթակառուցվածքի օգտագործման և այլ գործունեությունների միջև ծախսերի բաշխում,

2) ենթակառուցվածքի օգտագործման ծախսերի բաշխում հիմնական և լրացուցիչ ծառայությունների միջև:

12. Առաջին փուլում առանձնացվում են ենթակառուցվածքի օգտագործման մասով ուղղակիորեն վերագրելի ծախսերը և այլ գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Այնուհետև, ընդհանուր ծախսերից (ԸԾ) ենթակառուցվածքի օգտագործման մասով ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԸԾ}_\text{Ե} = \frac{\text{Ե}_\text{ՌԻՑ}}{\text{Ե}_\text{ՌԻՑ} + \text{Ա}_\text{ՌԻՑ}} \times \text{ԸԾ}$$

որտեղ՝

ԸԾ_Ե – և ընդհանուր ծախսերի մասնաբաժինն է ենթակառուցվածքի օգտագործման մասով,

Ե_{ՌԻՑ} –ն ենթակառուցվածքի օգտագործման գործունեությանը ուղղակիորեն վերագրված ծախսերն են,

Ա_{ՌԻՑ} –ն այլ գործունեությանն ուղղակիորեն վերագրված ծախսերն են:

13. Երկրորդ փուլում ենթակառուցվածքի օգտագործման մասով ձևավորված ծախսերից (Ե_{ՌԻՑ} + ԸԾ_Ե) առանձնացվում են հիմնական և լրացուցիչ ծառայություններին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, որից հետո ծախսերի մնացած մասը՝ ենթակառուցվածքի ընդհանուր ծախսերը (ԵԸԾ), նշված ծառայությունների միջև բաշխվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԵԸԾ}_{\text{Հ կամ Լ}} = \frac{\text{ԵՀ}_\text{ՌԻՑ կամ Լ} + \text{ԵԼ}_\text{ՌԻՑ}}{\text{ԵՀ}_\text{ՌԻՑ} + \text{ԵԼ}_\text{ՌԻՑ}} \times \text{ԵԸԾ}$$

որտեղ՝

ԵԸԾ_{Հ կամ Լ} –ն ենթակառուցվածքի ընդհանուր ծախսերի մասնաբաժինն է հիմնական կամ լրացուցիչ ծառայությունների մասով,

ԵՀ_{ՌԻՑ} –ն ենթակառուցվածքի հիմնական ծառայությանն ուղղակիորեն վերագրված ծախսերն են,

ԵԼ_{ՌԻՑ} –ն ենթակառուցվածքի լրացուցիչ ծառայություններին ուղղակիորեն վերագրված ծախսերն են:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ

14. Հիմնական միջոցների մաշվածությունը և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվարկվում են գծային մեթոդով՝ ելնելով լիազոր մարմնի կողմից ընդունված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքից կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարից և Կոնցենսիոն պայմանագրի գործողության ժամկետից:

15. Մաշվածությունն ըստ գործունեության տեսակների, ինչպես նաև ենթակառուցվածքի օգտագործման հիմնական և լրացուցիչ ծառայությունների միջև բաշխվում է սույն մեթոդիկայի 10-13-րդ կետերի համաձայն:

5. ՈՂՋԱՄԻՏ ՇԱՀՈՒՅԹ

16. Ենթակառուցվածքի օգտագործման մասով ԱՀ-ում ներառվող ողջամիտ շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի (ՇԲ) և ակտիվների նկատմամբ շահույթի նորմայի (ՇՆ) արտադրյալ՝

$$\text{Շ} = \text{ՇԲ} * \text{ՇՆ}:$$

17. Շահույթի հաշվարկման բազան Ընկերության զուտ ակտիվների արժեքն է՝ ենթակառուցվածքի մասով: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՇԲ} = \text{ՕՈԸԱ} - \text{ԿՄԱ} + \text{ՇԿ},$$

որտեղ՝

ՕՈԸԱ – ենթակառուցվածքի մասով ներգրավված ոչ ընթացիկ ակտիվների արժեքն է,

ԿՄԱ - կուտակված մաշվածությունը և ամորտիզացիան է,

ՇԿ – հիմնավորված և անհրաժեշտ շրջանառու կապիտալի մեծությունն է:

18. Շահույթի հաշվարկման բազան ժամանակ առ ժամանակ (բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ) կարող է վերահաշվարկվել՝ հաշվի առնելու համար՝

1) ակտիվներում կատարված ներդրումները.

2) կուտակված մաշվածության և ամորտիզացիայի փոփոխությունը.

3) շրջանառու կապիտալի թույլատրված մեծության փոփոխությունը:

19. Ակտիվների նկատմամբ շահույթի նորմայի թույլատրելի մեծությունը

սահմանվում է՝ ելնելով ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից, բայց ոչ պակաս 8 տոկոսից (մինչև հարկումը):

20. Շահույթի նորման կիրառվում է զուտ ակտիվների արժեքի նկատմամբ՝ հաշվի չառնելով նրա ֆինանսավորման կառուցվածքը (սեփական և փոխառու կապիտալ):

21. Շահույթը ենթակառուցվածքի օգտագործման հիմնական և լրացուցիչ ծառայությունների միջև բաշխվում է այդ ծառայություններին վերագրված հիմնական միջոցների (նաև ոչ նյութական ակտիվների) մաշվածության (ամորտիզացիայի) մասնաբաժիններին համապատասխան:

6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

22. Ենթակառուցվածքի օգտագործման հիմնական ծառայության վճարները հաշվարկվում են ըստ փոխադրման ծավալի չափման միավորի ընտրության և փոխադրման տեսակի ընտրության: Վճարման կարգը իրականացվում է Ընկերության և Փոխադրողի միջև կնքված պայմանագրի շրջանակներում:

23. Յուրաքանչյուր Փոխադրող պարտավոր է հետևել Ընկերությունում գործող գնացքների ձևավորման համընդհանուր նորմատիվ չափանիշներին (քաշ, գնացքի երկարություն և այլն) և անվտանգության կանոններին:

24. «Գնացք*կիլոմետր» չափման միավորով որոշվող փոխադրումների համար կիրառվում է $O\Phi_{q\text{կմ}}$ վճարի դրույքը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$O\Phi_{q\text{կմ}} = \frac{U\Delta_b}{\Phi_{\text{կմ}}}$$

որտեղ՝

$O\Phi_{q\text{կմ}}$ -ն՝ հիմնական ծառայության մասով Օգտագործման վճարն է, որն արտահայտում է ենթակառուցվածքի օգտագործման արժեքը՝ 1 գնացքը 1 կմ փոխադրելու համար,

$U\Delta_b$ -ն՝ ենթակառուցվածքի հիմնական ծառայության մասով սույն մեթոդիկայի 5-րդ կետի համաձայն որոշված անհրաժեշտ հասույթն է,

$\Phi_{\text{կմ}}$ -ն՝ հաշվարկային տարում Հայաստանի Հանրապետության տարածքում տեղափոխվող բեռնատար և ուղևորատար գնացքների քանակի և կատարած վազքի արտադրյալն է կամ գնացքների շրջանառությունը:

25. «Գնացք*ժամ» չափման միավորով որոշվող փոխադրումների համար կիրառվում է $O\Phi_{\text{ժ}}$ վճարի դրույքը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$O\Phi_{q\theta} = \frac{U\dot{Z}_h}{Q_{\theta}}$$

որտեղ՝

$O\Phi_{q\theta}$ -ն՝ հիմնական ծառայության մասով Օգտագործման վճարն է, որն արտահայտում է ենթակառուցվածքի օգտագործման արժեքը՝ 1 գնացքը 1 ժամ փոխադրելու համար,

Q_{θ} -ն՝ Հաշվարկային տարում Հայաստանի Հանրապետության տարածքում բեռնատար և ուղևորատար գնացքների փոխադրման ընդհանուր տևողությունն է՝ ժամերով:

26. «Տոննա*կիլոմետր» չափման միավորով որոշվող փոխադրումների համար կիրառվում է $O\Phi_{տկմ}$ վճարի դրույքը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$O\Phi_{տկմ} = \frac{U\dot{Z}_h \times S\Phi_F}{S_{կմ}}$$

որտեղ՝

$O\Phi_{տկմ}$ -ն՝ հիմնական ծառայության մասով Օգտագործման վճարն է, որն արտահայտում է ենթակառուցվածքի օգտագործման արժեքը՝ 1 տոննան 1 կմ փոխադրելու համար,

$S\Phi_F$ -ն՝ ենթակառուցվածքի օգտագործման հիմնական ծառայության մեջ բեռնափոխադրումների տեսակարար կշիռն է, որը որոշվում է հաշվարկային տարվան նախորդող մեկ լիարժեք ֆինանսական տարվա փաստացի տվյալների հիման վրա,

$S_{կմ}$ -ն՝ հաշվարկային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված բեռնափոխադրումների նետոտ ծավալի և կատարած վազքի արտադրյալն է:

27. «Ուղևոր*կիլոմետր» չափման միավորով որոշվող փոխադրումների համար կիրառվում է $O\Phi_{ուկմ}$ վճարի դրույքը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$O\Phi_{ուկմ} = \frac{U\dot{Z}_h \times S\Phi_{ու}}{ՈՒ\dot{Կմ}}$$

որտեղ՝

ՕՎ_{սի}-ն՝ հիմնական ծառայության մասով Օգտագործման վճարն է, որն արտահայտում է ենթակառուցվածքի օգտագործման արժեքը՝ 1 ուղևորին 1 կմ փոխադրելու համար,

ՏԿ_{ու}-ն՝ ենթակառուցվածքի օգտագործման հիմնական ծառայության մեջ ուղևորափոխադրումների տեսակարար կշիռն է, որը որոշվում է հաշվարկային տարվան նախորդող մեկ լիարժեք ֆինանսական տարվա փաստացի տվյալների հիման վրա,

ՈԻ_ս-ն՝ Հաշվարկային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված ուղևորափոխադրումների ծավալի և կատարած վազքի արտադրյալն է:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

28. Ենթակառուցվածքի օգտագործման լրացուցիչ ծառայության վճարները հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$\text{ՕՎ}_{\text{լր}} = \frac{\text{ԱՀ}_{\text{լր}}}{\text{Ծ}_i}$$

որտեղ՝

ՕՎ_{լր}-ն՝ լրացուցիչ ծառայությունների մասով Օգտագործման վճարն է, որն արտահայտում է i-րդ լրացուցիչ ծառայության համար ենթակառուցվածքի օգտագործման արժեքը,

ԱՀ_{լր}-ն՝ ենթակառուցվածքի i-րդ լրացուցիչ ծառայության մասով որոշված անհրաժեշտ հասույթն է,

Ծ_i-ն՝ Հաշվարկային տարում Հայաստանի Հանրապետության տարածքում i-րդ լրացուցիչ ծառայության ծավալն է կամ տրամադրման ժամանակահատվածը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 դեկտեմբերի 2012 թվականի № 516Ն
քաղ. Երևան

**«ՀԱՅՈՒՌԱԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐՏՆԱՅԻՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից բնակչության ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության տարեկան վճարը սահմանել 2270 դրամ՝ յուրաքանչյուր գազօգտագործող սարքավորման համար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Սահմանել, որ բնակչության ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերում երեքից ավելի գազօգտագործող սարքավորման առկայության դեպքում գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության դիմաց վճարները հաշվարկվում և գանձվում են երեք գազօգտագործող սարքի հաշվով:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի նոյեմբերի 1 -ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից բնակչության

ներտնային զազասպատման համակարգի տեխնիկական սպասարկման
ծառայության համար վճար սահմանելու մասին» №154Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 դեկտեմբերի 2012թ.